

Բաց Նամակ Թուրքիոյ Մշակոյթի Նախարարին

«Հայ համայնքը միշտ կը չափազանգէ եւ կը խեղաթիւրէ իրականութիւնը ինչ կը վերաբերի Հայ ժողովուրդի թիւերուն Թուրքիոյ տարածքին տեղահանութեն առաջ եւ ետքը. Հայերը կը փորձեն հիմք առաջացնել իրենց կեղծ պահանջներուն, օգտագործելով պատերազմի արխիւները, պաշտօնական արխիւները, եկեղեցական վիճակագրութիւնները եւ օտար միսիոնարներու տեղեկագիրները. Օսմանեան հողատարածքին վրայ բնակող հայ ժողովրդի թիւերուն վերաբերեալ դրուած տեղեկութիւնները, ժամանակ կը՛լլայ, որ կը գերազանցէ նոյնիսկ հայերու ընդհանուր թիւին սփիւռքի մէջ.»

ԱՅՍ ԿԸՆԷ ԹՈՒՐԳԻՈՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԿԱՅՔԷԶԸ

Թրքական պաշտօնական կայքէջը կը շարունակէ իր քարոզչական թիւերը ներկայացնել, հիմնուած Օսմանեան մարդահամարներուն վրայ ըսելով՝

«Հայ բնակչութեան թիւը, պետական հետեւեալ մարդահամարներուն համաձայն, Թուրքիոյ տարածքին եղած են 1893 թուականին 1,001,465 մարդ, 1906 թուականին 1,120,748 մարդ եւ 1914 թուականին 1,221,850 մարդ:»

Նկատի առնելով վերոյիշիալ երեք թուականներու մարդահամարները, իչայտ կուգայ, որ Հայ ժողովուրդի թիւը Համաշխարհային Առաջին պատերազմի ընթացքին եղած է ընդամենը առ աւելագոյնը 1,250,000 մարդ, կ'ըսէ **ԹՈՒՐԳԻՈՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ:** իր ըսածն ու գրածը առաւել փաստելու համար հետեւեալ մանրամասնութիւնները կը գրէ թէ՛

438,768 հայեր տեղահան եղան, այդ թիւէն 382,148 անձիկ ապահով իրենց նոր կայանները հասան. իսկ ջարդուածներուն համար կ'ըսէ, որ Արաբները 2,000 սպաննեցին, Քիւրտերը Տերսիմի մէջ 5,000 սպաննեցին, մեծ թիւ մը սննդեղէնի պակասին պատճառաւ մեռան, Թանշալտ եւ Ժանտատենդ հիւանդութիւններուն հետեւանքով մեռան մօտաւորապէս 30,000, ուրեմն ընդհանուր առմամբ 40,000 Հայեր մեռան 1915 թուականի տեղահանութեան ընթացքին:

Պուաւօ Թուրքիոյ Մշակոյթի Նախարարին կողմէ արար աշխարհին տրամադրուած ճշգրիտ տեղեկութիւններուն համար, պուաւօ պարոն նախարար.

Յարգելի պրն. նախարար, ձեր ըսածը փոխանձեցինք մեր ժողովրդին եւ մեր ընթերցողին. իսկ այժմ եթէ իրաւունք կուտաք, ձեզ ներկայացնենք Հայ ընթերցողի եւ ժողովուրդին պատասխանը, քանի մը փաստերով, ձեր նշած Հայ ժողովուրդի թիւերուն վերաբերեալ որոնք աւելի քան 4000 տարիներ ապրած էին իրենց սեփական հողերուն վրայ. պիտի ուզէի նաեւ, քանի մը փաստերով միայն, ձեր ուշադրութեանը յանձնել, Օսմանեան պետութեան եւ Երի Թուրքերու հրահանգները գործադրող՝ Թուրք զինվորներու զէնքի եւ սպանութեան սպառնալիքի տակ կրօնափոխ եղած հայերու թիւերուն մասին:

ԱՄՆ-ի Քոնկրէսի գրադարանի «Երի Թուրքեր եւ Հայերը» արխիւին մէջ կը յիշուի, որ Հայերու թիւը Թուրքիոյ մէջ մինչեւ Հոկտեմբեր 29, 1914 թուականին եղած է երեք Միլիոն Հայութիւն. ուրեմն 3,000,000 հայութեան թիւէն եթէ նուազեցնենք ձեր կայքէջի մէջ յիշուած 438,768 տեղահան եղածները, պիտի տեսնենք, որ 1915 թուականի ցեղասպանութենէն ետքը, տակաւին 2,561,232 Հայեր կապրէին Թուրքիոյ տարածքին. ուրեմն պետք է ձեզ հարցնենք թէ, ինչ եղան այդ Հայերը: Արդէտք այդ բոլորը զէնքի սպառնալիքի տակ կրօնափոխ ըրիք: Եթէ այդպէս է, միջազգային բոլոր օրէնքներուն համաձայն ցեղասպանութիւն չէ այդ: Վախ Պրն. Նախարար, անանկ սուտ թիւեր գրէ, որ կարենաս տոկոսային չափով մը, քանի մը միամիտներ համոզել, թէ ոչ անիմաստ տեղը ինչու կը հոգնիս:

Վերադառնալով ձեր կողմէն դրուած ոչ ճշգրիտ թիւերուն, կուզենք ձեր ուշադրութեանը յանձնել հետեւեալ իրականութիւնները:

1- Մշոյ եւ Մշոյ գաւառներուն եւ գիւղերուն, պետական պաշտօնական մարդահամարի պատասխանատու նշանակեցիք Պրն. Կարապետ Փոթիգեանը, սոյն մարդահամարի պաշտօնական արդիւնքը, Պրն. Փոթիգեանը ներկայացուց ձեր կառուարութեան, որուն մէջ գրուած էր, որ Հայերու թիւն է 225,000 մարդ իսկ Թուրքերուն թիւն է 55,000 մարդ, սակայն պետական ճնշումներուն տակ այդ թիւերը փոխուեցան եւ եղան, 105,000 Հայեր եւ 95,000 Թուրքեր:

2- «Նեւզէթ Օնիուն» “Evrensel.net” կայքէի վրայ կը գրէ՝ Յունիս 14, 1934 թուականին, ներքին գործոց նախարար «Սուբուու Քայա» Թուրքիոյ խորհրդարանին մէջ կը յայտարարէ, որ փոքրամասնութիւններուն առնջութեամբ երկու մարդահամարի առխիւ կը պահենք, մէկը աշխարհի հոյսց, իսկ երկրորդը, որը իրական թիւերն էն, մեր առխիւներուն մէջ կը պահուին:

3- Թրքերէն լեզուով գրքերու հեղինակ «Քազիմ Քատրի» կ'ըսէ՝ «Մեր երկրի մէջ հայ բնակչութեան թիւերը տակաւին Օսմանեան կառուարութեան օրերէն, 60% (տոկոսով) նուազ կը յայտարարուէր:»

Պրն. Նախարար, կրնաք արեօք հերքել վերոյիշեալ փաստերը: Եթէ կրնաք, ամենայն սիրով պատրաստ եմ լսելու ձեզ, իսկ եթէ չէք կրնար, ամօթ չէ. կրնաք ներողութիւն խնդրել ձեր սխալ տեղեկութիւններուն համար: Գիտէք Պրն. Նախարար, ժամանակ կըլլայ, որ ես ալ շատ միամիտ կը գտնուիմ, յուսալով, որ ձեր կողմէն դրուած սխալ տեղեկութիւններուն համար, գէթ մէկ անգամ ներողութիւն պիտի խնդրէք. բայց մէկ բան շատ հստակ է ինձ համար, որ դուք ձեր անձին հետ նստած կը մտածէք թէ, «այս մարդը խելագար է արդիօք, չի գիտեր, որ մենք 1,500,000 հայեր ջարդեցինք 1915 թուականին, եւ մինչեւ այսօր ներողութիւն չենք խնդրած, հիմա կուզէ, որ մէկ սուտ խօսելուս համար ներողութիւն խնդրեմ:»

Յարգելի Պրն. Նախարար, դուք որպէս մասնագէտ Հայկական պատմութեանը այսպէս կոչուած «Թուրքիոյ» տարածքին, պիտի խնդրէինք ձեզմէ լսել պատասխանը հետեւեալ հարցերուն վերաբերեալ.

1- “United Press” գործակալութիւնը, Կեսարիաէն ձեռագիր գրուած նամակ մը, Լոնտոնի մէջ “New York Times” թերթը կը հրատարակէ 1917 թուականի Յունուար 25-ին, ըսելով թէ, Պիթլիսի մէջ 8000 ընտանիքներ իսլամացուցին:

2- Պիթլիսի, վանի եւ Էրզրումի մէջ, հարիւր հազարաւոր երեխաներ իսլամացուցին, կը գրէ օրուայ Պրիտանիոյ Հիւպատոսը Էրզրումի մէջ՝ Clifford Lloyd-ը:

3- Թուրքիոյ խորհրդարանի անդամ, ցեղով Քիւրտ, Պրն. Ապտուլլա Ֆիռաթ, 2006 թուականին իր տուած հարցազրոյցով «Զաման» թերթին կ'ըսէ, որ իր մեծ հօրը ժամանակ 500 Էրզրումի գիւղեր իսլամացան.

4- “Viscount Bryce” կը գրէ ըսելով, «Վանի, Պիթլիսի եւ Էրզրումի մէջ հազար հազարաւոր Հայ մանուկներ Իսլամացուցին:

5- Սուլթան Ապտուլ Համիտի օրերէն սկսեալ, Օսմանեան կայսրութեան տարածքին բնակող Հայերու թիւերը կէսէն ալ նուազ կը յայտարարուէր կը գրէ Թրքերէն լեզուով գիրքերու հեղինակ՝ Քազիմ Քատրի-ը:

Յարգելի Պրն. Նախարար, մենք կը կարծենք, որ այսքանին եթէ պատասխանէք, կարիքը պիտի չ'զգացուի հազարաւոր փաստեր տալու ձեր յայտարարած թիւերուն մասին, որուն միջոցաւ կը փորձէք իրականութիւնները խեղաթիւրել: Ոչ թէ ընթերցողին մօտ միայն անհաւատալի կը թուի, այլ եւ դուք ինքնիդ համոզուած եք, եւ ձեր բնակարաններուն մէջ առանձին եղած ժամանակը, դուք ձեզի պիտի հարցնէք թէ, «ինչպէս կըլլայ, որ ես այսքան ոչ իրական թիւեր կը յայտարարեմ,» հիմա աշխարհը ինչ պիտի ըսէ իմ մասին: Սակայն հարց չէ Պրն. Նախարար, եւ

ոչ ալ ուշ, դուք կրնաք հիմա ալ փոխել այդ թիւերը, թէ ոչ ամէն օր, աշխարհի մէջ պիտի բազմապատկուի թիւը այն ընթերցողներուն, որոնց ծաղրանքին առարկայ պիտի դառնաք:

Յարգելի Պրն. Նախարար, ձեր կայքէջի վրայ գետեղուածը, մենք ներկայացուցինք սփիւքի մէջ հաստատուած, տասնհակներով այն մարդկանց, որոնց Մեծ հայրերն ու մայրերը, զէնքի սպառնալիքի տակ կրօնափոխ ըրիք, այդ մարդիկ երբ ձեր կայքէջը կը կարդային, մենք նկատեցինք, որ երբէք զարմացած չէին, ուստի հարցուցինք թէ, իրականութիւն է արդէօք այդ կայքէջին վրայ գրուածներ: Ոչ՝ պատասխանեցին, իրականութիւն չէ, սակայն նորութիւն ալ չէ. Թուրքիոյ իրերայաջորդ պետութիւնները ջանք չէն խնայած, Թուրքիոյ տարածքին՝ Արեւմտեան Հայաստանի հողերուն վրայ Հայ բնակչութեան թիւերը նուազեցնելու, ներքին ծրագրուած քաղաքականութեանը. չի բաւեր այդ, նոյնիսկ այսօրուայ Թուրքիոյ տարածքին բնակող, աւելի քան 10 միլլիոն կրօնափոխ եղած Հայերու ժառանգորդներու թիւերը կէս միլլիոն յայտարարելու, որովհետեւ այդ թիւերը եթէ յիշէն իսկ, ահ ու դողի մէջ պիտի ապրին ինչպէս վերջին 200 տարիներուն եղած է այդ:

Յարգելի Պրն. Նախարար, եթէ կարենաք մեր ըսածները փաստացու օրէն հերքել, եւ ձեր ըսածները գիտական ձեւով փաստել, այս անգամ իրապէս, որ Գլխագիր պիտի գրեմ “ՊՌԱԽՕ ՊՐՆ. ՆԱԽԱՐԱՐ.”

Մայքըլ Սօսիկեան

Հոկ. 28, 2009